

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ժողովրդական առակներ. Ա. գրքոյկ. Կենդանական վէպեր. Ս. Հայկունի. Վաղարշապատ. 1907 թ. տ. 16⁰. 92 երես. գինը 30 կ.

Ս. Հայկունին, այս ժողովրդական բանահիւսութեան բեղմնաւոր բանահաւաքը, սկսել է «Ժողովրդական առակներ» ընդհանուր խորագրով լոյս ածել մի շարք գրքոյկներ՝ որոնցից առաջինը կազմում են «Կենդանական վէպերը»:

Դեռ սրանից տասը տարի առաջ, Ազգագրական Հանդիսի երկրորդ գրքում մենք տուինք «Կենդանական վէպ» խորագրով առանձնապէս Աղուէսին վերաբերեալ առակներ, և հրաւիրեցինք մեր բանահաւաքներին ուշադրութիւնը ժողովրդական բանահիւսութեան այս խիստ կարեւոր մասի վրայ, ուր ցուանում է ժողովրդի բարոյական փիլիսոփայութիւնը, նրա աշխարհայեացքը և այն ընդհանուր կապը, որ կայ ցեղակից ազգերի մէջ, այն բնական, հասարակական ազդեցութիւնների կնիքը, որի համեմատ նախնական ընդհանուր առակը դանազան ազգերի մէջ փոփոխութիւնների է ենթարկուել:

Տասնեակ տարիների ընթացքում ոչ մեզ յաջողուեց այդպիսի բաւականաչափ նիւթեր հաւաքել և ոչ էլ ուրիշները հրատարակեցին: Այժմ պ. Հայկունին որոշեալ չափով լրացնում է այս պակասը, սակայն սն մի կաթիլ է հայկական հարուստ բանահիւսութեան մէջ: Բայց և այնպէս՝ մենք սիրով ողջունում ենք այս գեղեցիկ գործը և կատարեալ յաջողութիւն ցանկանում:

Գործի ազագայ կատարելութեան համար թերևս աւելորդ չլինէր մի երկու նկատողութիւններ:

Պ. Հայկունին մի նախաբանով դիմում է հայ պատգմիներին, և նրանց է բացատրում թէ իւր հաւաքած առակները ինչպէս է դասակարգելու և այլն:

Այսպիսի, բազմաթիւ բարբառներով զրուած առակները պատանիների համար չեն հրատարակուում, այլ՝ ազգագիրների, լեզուաբանների, ազգերի հոգեբանների, ինչպէս և բանաստեղծների, որոնք սրանցից յատկապէս այդ պատանիների համար վերստին հիւսում են գրական լեզուով, բայց ժողովրդական հա-

մով ու հոտով առակներ, ինչպէս արել են Յ. Թումանեան և ուրիշներ:

Ապա խօսելով գաւառաբարբառները հարազատութեամբ արտայայտելու վերաբերութեամբ, պ. Հայկունին ասում է, թէ «այդ ինձ չէ յաջողուած՝ պատճառը գլխաւորապէս այն է, որ աստանդական հայ ժողովուրդը ընդմիշտ տեղափոխուելով կորուսած են բնիկ բարբառի մի մասն և կամ ենթարկուած են տարբեր գաւառաբարբառի ազդեցութեան»։ Այսպէս տեղափոխուած և տարբեր գաւառաբարբառի ազդեցութեան ենթարկուած բարբառներն էլ կազմում են բարբառների սուսնձին ստորաբաժանում և պահանջւում է, որ բանահաւաքը միանգամայն հաւատարիմ մնայ նրա հարազատութեան։ Այսպէս, օրինակ, բաւական տարբերութիւն կայ բուն էրզրումի և Ախալքալաքի, Աղէքսանդրապօլի բարբառների մէջ, չնայելով որ վերջիններս ծագած են առաջինից։ Այս պատճառով էլ բանահիւստութիւնը գրի պիտի առնել հէնց իւր տեղում, պահպանելով իւր տեղի բոլոր լեզուաբանական առանձնայատկութիւնները, և ոչ թէ պատահական . գաղթականներից, որի ոճի անհատապէս կրած ազդեցութիւնները իրաւունք չունենք վերագրելու ամբողջի ոճին. հետեւապէս և՛ լեզուաբանական մեծ արժէք չունին պ. Հայկունու հեքիաթներից և առակներից նրանք՝ որոնք թէև Խոյի, Ալաշկերտի բարբառով են, բայց գրի են առնուած էջմիածնում մի որևէ պատահական գաղթականի բերանից։ Պէտք է գրի առնել բուն Ալաշկերտինը՝ Ալաշկերտում, Ալաշկերտի Ապարանի գաղթականներինը Ապարանում, Նոր-Բայազէտի Ալաշկերտինը Նոր-Բայազէտում և այն ժամանակ գեղեցիկ կերպով երևան կը գան թէ շրջապատող բարբառների և թէ սրանց բնական և հասարակական դարգացման ազդեցութիւնները։ Դասակարգութեան և դասաւորութեան մէջ ևս կան թերութիւններ, սակայն սրանք չեն պակասեցնիլ նիւթի արժանաւորութիւնը. կան նաև մի քանի առակներ, որ միանգամայն կենդանական վէպին չեն վերաբերում, ինչպէս օրինակ «Դովլաթն ու խելքը» և այլն։ Բառարան թէև ունի, բայց այն գրքոյկում գործածուած բոլոր անծանօթ և օտար բառերը չկան։

Ե. Լ.